



ՄԱՍԻՔ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36-րդ ՏԱՐԻ

ՄԱՍԻՔ 28 ՓԵՏՐՈՒԱՐ 1887

ԹԻԻ 3862

ՄԱՍԻՔ ԻՆՍՏԻԹՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառաց համար 70 դր. եւ օսմար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրութեան զրկելու է առ մատակարարութիւն Սրբեկի եւ Սասիսի, Կ. Պոլիս, Դալամիա, Նորատուփեան Դամ:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ազգային (Նոր Պարբերութիւն և Նոր Բաշ Ժողովքի մէջ) Ա. ՍՐՔԻԱՐԵԱՆ Արուծին պէկ ԺԻԻԼ ՏԸ ՄԱՐԹԱՆ Ջինուորն եւ գործաւորը Բաղաբական Նամակ Իզմիրէ Սրարատեան Սուրհանդակ Հայք եւ ռուս-պարսկական պատերազմը Խնդիրը Ռուսահայոց Տագնապը

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱՅ 27 ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐ ՊԱՏՐԻՍՏՐԻՒՄ ՍԸ ԵՒ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ՍԸ ՊԵՏՐՈՒԱՐ

Ո՛չ մէկ ժողովուրդ, փոքր թէ մեծ կը ներկայացնէ այն տխուր տեսարան որոյ հանդիսատես լինելու դժբաղդութիւնն ունի այսօր հայ ազգն: Ամէն ուրեք անվտանգութիւն, ամէն ուրեք կասկած ազգային գործոց կառավարելներու բարոյական զգացմանց վրայ: Ահա՛ Կաթողիկոս մը որ իւր Սինօղականներով կամբաստանուի թէ՛ կը վաճառեն ազգն ու եկեղեցին: Գուցէ անհիմն լինի այդ ամբաստանութիւն, եւ սակայն ժողովուրդն առանց վարանելու կը հաւատայ այդ իրը ամենաբնական իրողութեան մը: Ահա՛ Կրօնական Ժողով մը՝ որոյ կանգամակցին հայ եկեղեցականութեան ամենէն պատկառելի անուններն, եւ սակայն երբ եկեղեցւոյ վերաբերեալ կարեւոր խնդրոյ մը մասին իրենց համոզումը կը յայտնեն, Բաղ. Ժողովա-

կանք կը պատասխանեն նոցա. «Կը սըտէք դուք, կը զոհէք դուք ձեր խիղճն ու համոզումն, ոտնակոխ կ'ընէք ազգին շահերն, որպէս զի յաղթանակեն ձեր անձնական նկատումներն, որպէս զի ապահովան ձեր շահերն ի վնաս ազգային շահուց»: Ահա՛ Բաղաբական Ժողով մը՝ որոյ կանգամակցին պետական անձինք եւ ազատ վաճառականք, եւ սակայն երբ իրենց տեսակէտով կը պաշտպանեն ազգին կենսական շահուց վերաբերեալ խնդիր մը, իրենց կը պատասխանեն. «Կը ստէք դուք, կը զոհէք դուք ձեր խիղճն ու համոզումն, ոտնակոխ կ'ընէք ազգին շահերն, որպէս զի յաղթանակեն ձեր անձնական նկատումներն, որպէս զի ապահովան ձեր շահերն ի վնաս ազգային շահուց»: Երկար ատենէ ի վեր շատ դարերէ ի վեր մեր պատմութիւնն արձանագրած է ու կ'արձանագրէ ազգային շահուց այնքան վաճառումներ որ այլ եւս Հայն իրաւունք մը ունի թերեհաւատ լինելու ո՛ր եւ է հայու անհաշակաւոր ազգասիրութեան: Եւ ամէն օր նորանոր դէպքեր կը զօրացնեն այդ թերեհաւատութիւնն: Ազգին բարոյականը խորապէս խանգարուած է: Եւ այդ խանգարումն այսօր չարաչար կը տուժենք, երբ ազգին ամենէն կենսական շահերը խնդրոյ առարկայ են, եւ մենք ի զուր կ'որոնենք այնպիսի անձնաւորութիւններ որոց արտի մեծութեան, զգացմանց սրբութեան կարենանք ապաւինիլ: Կարօտ ենք այսօր ո՛չ թէ խելացի, ո՛չ թէ ճարպիկ, ո՛չ թէ խորագետ տաղանդներու, այլ մաքուր սրտերու, վեհանձն ոգիներու: Եւ ո՛ր են տարաբաղդ ազգին այդ յենարաններն: Եւ սակայն չենք կարող վշտանալով դժմանալ: Մեծ խնդիր մը կայ, խնդիր մը՝ որ մեր բարոյական մերկութիւնը կը պարզէ ակներեւ: Այսու հանդերձ պէտք է լուծել զայն ազգին օգտակար եղանակաւ — եթէ արդէն ուշ չէ: Մեր խորին համոզմամբ միակ դրաւական զոր կրնանք ունենալ այդ խնդրոյ բարեյաջող լուծման համար, նոր Պատրիարքի մը եւ նոր Բաղ. Ժողովոյ մը ընտրութիւնն է: Ներկային եւ ապագային համար Կատասխանատու մարմնոյ մը գոյութիւնը կենսական պայման է խոհական որոշման մը յանգելու: Այսօր ազգին ոչ ոք պատասխանատու է ապագային համար:

Ապագային համար պատասխանատու մարմնոյ մը բացակայութիւնը միշտ ազդեցութիւն կ'ունենայ Սինօղական կրօնական կրօնական մատնանիշ ընել այս ճանարտութիւնն օրինակ բերելով վերջին մի քանի տարիներու մէջ ծագած կենսական խնդիրներէ երկուքը միայն: Մի օր Ներսէս Պատրիարք եւ Բաղ. Ժողովն որոյ կատենապետէր Մադ. սուլտան Սիմօն պէյ, բերին Ազգ. Ժողովոյ առաջարկութիւն մը՝ որ կը վերաբերէր Երուսաղեմայ պարտուց լուծման: Կ'առաջարկէին խնդրել օսմ. կառավարութենէն յաւելում մ'ընել երեք տարւոյ համար, գաւառացի Հայոց վրձարած զինուորական տուրքերու վրայ: Այդ յաւելմամբ պիտի վճարուէր Երուսաղեմայ պարտքն: Ազգ. Ժողովը չէր ուզեր ընդունիլ այդ առաջարկն, անիրաւ եւ փաստաւոր համարելով զայն, բայց Պատրիարք ու Վարչութիւն իրենց բոլոր ազդեցութիւնն ի դորձ դրին զայն ընդունելի ընելու: Եւ յաջողեցան: Հետեւութիւնը կը տեսնենք այսօր: Բայց զո՞վ պատասխանատու բռնել, յորմէ՞ հաշիւ պահանջել: Ներսէս Պատրիարք ի գերեզման է, Սիմօն պէյ եւ իւր ընկերք այլ եւս չեն վարչական աթոռի վրայ, եւ անոնց յաջորդք պիտի պատասխանեն Մենք անցեալին ժառանգորդներն ենք, բայց ոչ պատասխանատուները: Որոնք որ ձեզ խորհուրդ տուին գնացէք անոնց հարցուցէք:» — Եւ ո՛ր են նոքա: Երբ վախճանեցաւ Գեորգ Կաթողիկոս, ունեցանք կաթողիկոսական Յանձնաժողով նախագահութեամբներ սէն Պատրիարքի: Խորէն եւ Մտտութեան եպիսկոպոսներ, Սեդրիշէն եւ Նուրեան Էփէնտիներ կանգամակցէին այդ Յանձնաժողովոյ, եւ սակայն տեսանք իմաստուն դործերն: Ի դիմաց այդ Յանձնաժողովոյ յայտարարեց օր մը Նուրեան Էփէնտի յատենի Ազգ. Ժողովոյ թէ՛ համաձայնած են Սինօղի հետ եւ Թուրքիոյ Հայոց կողմանէ երբ ընտրելեաց ցանկը ներկայացնելու գրութիւնն ընդունուած է երկու կողմանէ: Ազգ. Ժողովն հաւատաց, եւ հնազանդեցաւ Յանձնաժողովի հրահանգաց: Եւ օր մը Կաթողիկոս ունեցանք մի Մակար եպիսկոպոս որոյ անունը մեր ընտրելեաց ցանկին մէջ գտնուելու պատիւը չունէր: Ո՛ւմ դիմել յորմէ՞ հաշիւ պահանջել:

Այդ բաւ չէր: Հարկ եղաւ ճանաչել Մակար Սրբազանը Կաթողիկոս: Որքան խոստումներ տրուեցան Այդ. Ժողովոյ, եւ այսօր ո՛չ միայն այդ խոստումներէ մին իրականացաւ, այլ նաեւ աւելի եւս կը վատթարանայ մեր եկեղեցւոյ կացութիւնն ի Ռուսիա, աւելի քան երբեք պատերազմ հրատարակուած է ընդդէմ մեր կրօնից, եւ սակայն ո՛րք են նորա որք յորդորեցին ու ստիպեցին զմեզ ճանաչել Մակարը Կաթողիկոս ամենայն Հայոց:

Յարութիւն Պատրիարք հրաժարած է. Եռսուփեան Տիգրան էֆէնտի այլ եւս Այդ. Ժողովոյ ատենապետ չէ. Խորէն Նար-Պէյ Սրբազան այլ եւս Կրօնական Ժողովոյ ատենապետ չէ: Երկու ամիս եւս, եւ Նուրեան էֆէնտի այլ եւս Քաղ. Ժողովոյ ատենապետ չէ: Ո՞ւմ դիմել, յորմէ՞ հաշիւ պահանջել: Այս անձնաւորութիւններն էին — կամ այնպէս կ'ըսէին — միջնորդ մեր Այդ. Ժողովոյ եւ Սինօդին ու ռուսական դեսպանատան միջեւ: Եթէ հարցում ուղղենք ասոնց պիտի պատասխանեն. «Մենք այլ եւս ազգին պաշտօնեայնեք չենք, ի՞նչպէս խօսինք, ի՞նչպէս բանակցինք Սինօդին ու դեսպանատան հետ»:

Եթէ հարցում ուղղենք սոցա յաջորդներուն, պիտի պատասխանեն.

— Մենք պատասխանատու չենք անցեալին: Եղած բանակցութեանց, ձեզ տրուած խոստումներու մասին տեղեկութիւն չունինք. ի՞նչ կրնանք ընել:

Այս է մեր վիճակը, ո՛չ ոք պատասխանատու է ո՛ր եւ է խնդրոյ համար: Բայց վերջապէս պէտք չէ՞ օգուտ քաղել փորձառութենէն: Եւ ի՞նչ օգուտ քաղել: Մենք կը տեսնենք որ ամէն ատեն երբ խոստում մը կը տրուի հայ ազգին եւ փոխարէն զոհողութիւն մը կը պահանջուի, մենք միշտ զոհողութիւնը կ'ընենք բայց խոստումը երբեք իրականութիւն չլինիր: Եթէ կաթողիկոսական խնդրոյ մէջ թէ՛ աստ եւ թէ ի Ռուսիա նախ մեզ տրուած խոստումները կատարուէին եւ ապա մենք զոհողութիւն ընէինք, խաբուած չէինք ըլլար: Ռուս կառավարութիւնն երբ որ ուղէ կրնայ դպրոցները փակել կամ մեզ վնասակար տնօրինութիւններ ընել սակայն մենք մեր զոհողութիւններն ընելէ վերջ չենք կրնար այլ եւս ետ առնուլ: Մեր համոզմամբ հայ ազգը պէտք չէ վատահի ո՛ր եւ է խնդրոյ մէջ ո՛ր եւ է խոստման, կանխիկ առնենք, կանխիկ տանք:

Ներկայ պարագայից մէջ եթէ ուղենք դարձեալ փորձառութենէ օգուտ քաղել, պէտք չէ որ անսահման վատահոլութիւն ունենանք արդի Քաղ. Ժողովոյ վրայ, որոյ պաշտօնը կը լրանայ երկու ամսոց մէջ. յետ այնորիկ զով գտնել, ո՛րք են համար պահանջել:

Արդի Քաղ. Ժողովն եթէ իրապէս կը փափաքի ազգին օգուտը, պէտք է որ զոհէ իւր երկու ամսուան պաշտօնավարութիւնն եւ հրաժարի: Ազգն

ունենալով այն ժամանակ նոր Պատրիարք մը, նոր Քաղ. Ժողով մը որք պաշտօն պիտի վարեն բաւական ժամանակի մը համար, Այդ. Ժողովը կարող է դրական կերպով իբր իւր գործոց պատասխանատու մարմնոյ մը հետ, համաձայնիլ անոնց հետ եւ օրուան մեծ խնդիրը լուծել ազգին ամենէն օգուտ կար կերպով:

Այժմ տաղնապով, սպառնալեաց ներքեւ, առանց եկեղեցական համագումար Ժողովոյ, առանց Պատրիարքի, անհամաձայն Կրօնական եւ Քաղաքական Ժողովոյ մը միջոցաւ, ձեռամբ Քաղ. Ժողովոյ մը, որոյ պաշտօնավարութիւնը շուտ կը վերջանայ, անհնարին է ազգին օգտակար եղանակաւ կարգադրել օրուան մեծ խնդիրն:

Ա. Ա.

ԱՐՈՒԹԻՆ ՊԵՎ

Ա.

Ահա՛ մի անուն որ անտարակոյս ծանօթ չէ եւ ո՛չ մի Թուրքիացի հայու, եւ սակայն Սրբի յէկ պատմական այն դէմքերէն է որ պէտք է գրուեն սոցի մը սէրն ու համակրանքն:

Առէ՛ք ցիլ մ'էր այդ պէլը

Առէ՛ք ման եւ Հայոց, ունին լեզու զԱռեացին,

Եւ Բամ-Բարակ կրնար յաւելուլ այս տողին թէ՛ ջերմեանդ լուսաւորչական հայեր եւ Առեացիք: Այդ ջերմեանդ ու լուսնէր զոր Ռուսք վարպետութեամբ կ'ուզէին ցրտացնել, չողողացնելով նոցա աչաց Օրթոքս Եկեղեցւոյ փայլն ու պերճանքն: Սրբի յէկ պատուար մը հանդիսացաւ ընդդէմ նոքր հալածանաց եւ իւր հովանին տարածեց իւր կրօնակցաց վրայ:

Ղարապալի եւ Թիֆլիզի մէջ դէպի լեռնաշղթաներու կողմն ինկած երեք գաւառներ կան, որոց գլխաւորը Նուրի գաւառն է: Այդ գաւառներն, ինչպէս ցոյց կուտայ նաեւ վեներտիկեան քարտէսը, կը կազմեն հին Առեացոց աշխարհն, որ մեր հին գաւառներէն մին եղած է միշտ:

Այլ Առեացիք մեզմէ տարբեր ցեղ են, մին լեռնական ցեղերէ որպէս են Չէրքէք, Եւ պահած են իրենց լեզուն: Սակայն, փոքրիկ Ժողովուրդ, միշտ եւթակայ եղած է Հայոց, Եւ հայկական եկեղեցին նո իրադրոյթով է նոցա հայութիւնը: Բայց պատմական պատահարներն հարկադրած են այդ ցեղի մի մասն ընդունիլ իսլամական կրօնը եւ իբր անմիջական հետեւութիւն այդ կրօնափոխութեան այդ իսլամ Առեացիք իրենց տոհմային բարբառոյն փոխան կը խօսին թուրքերէն: Այլ մի փոքրիկ մասն այդ լեռնականաց, թուով մօտ 30,000 պահպանած են քրիստոնէութիւնը, ջերմ լուսաւորչականներ են. իրենց կեդրոնն է Վարդաշէն եւ Նէժ:

Տակաւին Ներսէս Աշտարակեցին չէր ընտրուած Կաթողիկոս. խառնակ, շիտի օրեր էին, անպաշտպան էր հայ եկեղեցին ամէն ուրեք: Առիթն օգուտ կը քաղէր Կովկասեան փոխարքայն: Մի օր ռուս Բոքեր կողան ի Վարդաշէն. դոքա իրենց առաջնորդ ունին մի հայ, թիկնապահ փոխարքային:

Ռուս քահանայք չեն եկած հաւատոյ

տարածում ընելու նպատակաւ, այդ իրենց մոքէն շանցիկ, միայն բարեմտաբար կ'ուզեն ուրախութիւն պատճառել բարեպաշտ քրիստոնեայններուն, եւ ի՞նչ պարզ միջոց: Միասին բերած են պատկերներ, մի քանի հազար հատ Այի-Նիքօլայներ, Այի-Տիմիթիներ, ռուս Գրիստոս, ռուս Աստուածածին: Լուր կը տարածեն թէ այդ պատկերները ձրի պիտի բաշխուին ամէն անոնց որ ջերմեանդ քրիստոնեայններ են, ուստի ով որ կ'ուզէ թող երթայ մի հատ առնու: Առեացիք ռուսերէն չեն գիտեր եւ իրենց պատարագն հայերէն լեզուաւ է: Բայց ի՞նչ վնաս մի սիրուն պատկեր առնուլ, վրան նայիլ, խնդալ եւ զոյն տունը պատին փակցնել Պատկերները կ'ըստպանին մի քանի օրերու մէջ, եւ Բոքերն իրենց օրհնութիւնը բաշխելով կը մեկնին:

Օրերը, շաբաթներն, ամիսները կ'անցնին, տարին կը բոլորի եւ ահա՛ ժպիտը դէմքերուն վրայ մեր սուրբ հայրերը կ'երևին ի Վարդաշէն: Ժողովուրդն ուրախութեամբ կը դիմէ նոցա առաջ եւ նոր պատկերներ կ'ուզէ: Բայց այս անգամ լաւագոյնը կայ. փոխանակ պատկերներու ծրարի ուրիշ ծրարներ կան, նախաճառ գոյներով ծրարներ, աւելի սիրուն գոյներով. պատկերներ կը ներկայացնեն թղթադրամ ռուպլիներ որք պիտի բաժնուին բարեպաշտ ժողովուրդին: Բայց ի՞նչպէս ընել բարեպաշտ ամբարիշտէն: Նրբամիտ ռուսին համար ոչինչ անկարելի է երբ խնդիր մը հաւատաւորութեան հետ կը բուրէ: Բարեպաշտները գտնել զժողովուն չէր: Նախորդ տարին պատկերներ բաշխուեցան, այնպէս չէ՞: Ի հարկէ այդ պատկերներն անոնք ընդունեցան սիրայօժար որք ջերմեանդ հոգւով կը պաշտեն Գրիստոսն ու սուրբերն, արդ այդ պատկերներն վկայականներ են որք կ'ապացուցանեն նոցա սեփականատէրերու բարեպաշտ ոգին: Թո՛ղ ներկայացնեն այդ պատկերները քահանայից եւ անմիջապէս կը վարձատրուին ռուպլիներով:

Քահանայք կը բազմին լաւ տան մը մէջ, ռուպլիները ըզվերին, տետրակ մը ու կաղամար առաջին եւ կ'սպասեն բարեպաշտներու: Սոքա չեն վարանիր եւ մօտ երեք հազար անձինք կը դիմեն այդ նորօրինակ դրամատունը: Բարի քահանայներ կը տեսնեն պատկերները, կը վճարեն ռուպլի եւ կը հարցնեն ընդունողին անունը զոր կ'արձանագրեն: Անպատեհութիւն մը չէ այս արձանագրութիւնը: Ամէն տարի դարձեալ ոտով պիտի տրուի, պատկերները կրնան կորսուիլ, պատառիլ, բայց անուններն որ միանգամ արձանագրուած են կը մնան անջինջ: Նոյն քահանայներն կամ նոցա յաջորդներն չորհիւ այդ արձանագրութեան կարող են այնուհետեւ առանց ո՛ր եւ է դժուարութեան բաշխել դրամներն, պատկեր տեսնելու հարկ չմնար: միայն մէկ տարուան վկայութիւնը կը բաւէ:

Այս ճարտար լեզուն կը գործածեն քահանայք ամէն անոնց որք կը հարցնեն թէ ինչո՞ւ իրենց անունները կը գրուին: Ի՞նչ ըսել այսպիսի ազնիւ մտածութիւններու: Բայց կը գտնուին դաժանաբարոյ անձինք որք հաւատարիմ իրենց պապեանական աւանդութեանց, միշտ կասկածոս են ուրախ զուարթ դէմքով այլակրօն եկեղեցականաց: Այդ խոստափրտներն ոչ միայն չեն ներկայանար դրամատունն, այլ պատկերներն ալ ծուրի ծուրի ընելով կը նետեն այնպիսի տեղեր ուստից վերադարձն անդէպ է:

Ինչ եւ է մեր Բոքերը — կը բաւականանայ անուններովն զոր կ'արձանագրեն եւ

խաչանիչ օրհնութիւններն տարածելով քաղ-
քին վրայ կը մեկնին կ'երթան :

Գարձեալ կը բոլորի տարին , գարձեալ
գարնան առաջին թուականներու հետ ի-
րենց դայլայիկները լսելի ընել կուտան մեր
քօթերն : Այլ օրքան կերպարանափոխ : Այս
անգամ հեղ ու խոնարհ քահանայք չեն որ
կը ներկայանան այլ մի փայլուն մասնա-
խումբ , փայլուն ոսկեզօծ պատկերներով եւ
փայլուն փողերով :

Մասնախումբը կը բաղկի տեղւոյն ճո-
խադոյն տան մէջ , մայր-տետրը կը բանայ եւ
կը հրաւիրէ հետգհետէ ջերմեանդ բարե-
պաշտներն , որոց անուններն արձանա-
դրուած էին , ներկայանալ եւ ընդունիլ
ճոխ պարգեւներ :

—Ապրի՛ք , ապրի՛ք , կ'ըսեն ներկայացող-
ներուն , ահա՛ այսպէս կը վարձատրուիք
դուք եւ գեռ աւելին պիտի վարձատրուիք
որովհետեւ «պաշտօն»-ը (Ռուսաց կրօ-
նը) ընդունած էք :

Խեղճ Ուսէացիք զարմացմամբ կը հար-
ցնեն թէ ի՞նչ ուղղափառութիւն : Իրենք
լուսաւորչական քրիստոնեայներ են , ուրիշ
կրօնք չեն ճանաչեր , եւ թէ երբեք չեն
կարող սուսանալ :

Մասնախումբը կը պատասխանէ թէ
այդ մայր-տետրին մէջ արձանագրուած են
անոնց անուններն որք յօժարակամ ընդու-
նելով «պաշտօն»-ը գրել տուած են ի-
րենց անուններն : Ռուսաց օրէնքն է կ'ը-
սեն , որ երբ մի քրիստոնեայ կը մտնէ ուս
եկեղեցին , այլ եւս չէ կարող անտի դուրս
ելնել :

Մեծ աղմուկ , մեծ յուզում կը տիրէ ժո-
ղովրդեան մէջ . մասնախումբը չուզեր այլ
եւս խնդիրը շատ բարբոքել . առ այժմ ինչ
որ եղաւ բաւական կը համարին . յետոյ
դարձեալ կը նային :

Այդ տարին ալ կ'անցնի , բայց ուս կրօ-
նաւորք չեն սպասեր տարւոյն լրման , այլ
մերթ ընդ մերթ կը պատուեն Վարդաշէնի
իրենց սիրալիր այցելութեամբ : Կը յաճա-
խեն մայր-տետրին մէջ արձանագրուողնե-
րու տուներն : Այո՛ , իրենց անունները լսած
է փոխարքայն , այդ անունները պիտի հա-
ղորդուին մինչեւ Բեդեքսապուրկի Կայսրն ալ
պիտի լսէ , որչափ գոհ պիտի մնայ : Ինչ
պատիւներ , ինչ փառքեր կ'ապասեն իրենց ,
ինչ օգուտ այսքան յարեալ մնալ այդպիսի
մի փոքր եկեղեցոյ սրպէս Հայոցն է :

Այսպէս ուս կրօնաւորք կ'երթան ու
կուգան մի քանի տարի եւ անգալաբար
կ'ընտանեցնեն ժողովուրդը ուս անուան ,
ուս բարուց հետ : Երեք տարի կ'անցնի .
եւ ահա՛ օր մը այդ քահանայները կուգան
Վարդաշէն իրենց հետ ունենալով ճարտա-
բապետներ եւ արուեստաւորներ : Ռուս ե-
կեղեցոյ մը հիմերը պիտի գնեն :

Եկեղեցին կը կառուցուի , փառաւոր ,
հոյակապ շէնք մը , կառուցման ծախքը կա-
ռավարութեան կողմէն կը հոգացուի եւ
հետեւաբար բնական է որ Ռուսաց եկեղե-
ցին իւր նմանը չունենայ Վարդաշէնի մէջ :
Ժողովուրդը կուգայ կը խոնի եկեղեցոյն
դրան առաջ , բայց ոչ որ կ'ուզէ ոտք դնու-
նէն ներս գնել . կը սիրեն իրենց աղբափակ
բայց հաղար տարիներու իրենց հոգեկան
մխիթարն ու սփոյն եղող հոյ եկեղեցին :

Ռուսք չեն յուսահատիր . ապագայն համ-
բերելով աշխատողին է . կը յուսան յաղթել
այդ սրտով բարի , մարմնով կորովի , բայց
թուով նոսազ ժողովրդեան : Ամէն օր զան-
գակները խորոտածայն կը հնչուն , բայց ի
զուր :

Այլ քահանայք ամէն ուրեք մուտք ու-
նին , կը պանծացնեն յաջ ուսմին այդ փա-
ռապանծ շէնքն : Որչափ անոնցմէ գերա-
զանցները կը գտնուին թիֆլիզ , եւ ոչ
միայն եկեղեցիներ այլ եւ դպրոցներ . ինչո՞ւ
Ուսէացիք չորկեն իրենց զաւակներն ի
թիֆլիզ այդ դպրոցները . ծախքը կառավա-
րութիւնը պիտի հոգայ . փայլուն ասպա-
րէզներ կը բացուին տղայոց առաջ : Եւ յե-
տոյ , թո՛ղ հոգ չընեն կրօնքի համար . ո՛չ որ
իրենց կրօնքին պիտի դաշխ : Ասկէ զատ ի՞նչ
տարբերութիւն կայ երկու եկեղեցիներու
մէջ : Բայց թիֆլիզ աշակերտ դրկելու իրա-
ւունքն անոնցն է միայն որոց անուններն
արձանագրուած են մայր-տետրին մէջ :

Բազմաթիւ ծնողք կը յանձնեն իրենց
զաւակներն քահանայներու խնամոց : Ա-
շակերտք կը զրկուին թիֆլիզ բայց ո՛չ
բժշկական դպրոց , —եւ արդէն չկայ— ո՛չ
զինուորական դպրոց , ո՛չ այլուր կը մտնեն :
Կառավարութիւնը կը տեղաւորէ զանոնք
Ռուսաց սէմինարիաներու մէջ : Անդ կ'ուս-
նին ուսներէն , անդ կ'ընտելանան Ռու-
սաց բարբերու . եւ ահա՛ օր մը բոլորն ալ
ուզով ուսացեալ , — եւ ոմանք վարդա-
պետ եղած— կը վերադառնան ի հայրենիա
Այդ տղայք մեկներ էին Վարդաշէնէ Համ-
բարձում , Աւետիս անունով եւ կը վերա-
դառնան Նիքոլա , Տիմիթի եղած : Վար-
դապետները կը պատարագեն Ռուսաց ե-
կեղեցին , աշխարհական երիտասարդները
կը տարածուին ժողովուրդի մէջ , նոր բար-
բերով , նոր սովորոյթներով :

Այլ եւս կը վրդովի ժողովուրդի հան-
գիստն ու խաղաղութիւնը . մի եւ նոյն տան
մէջ մէկ եղբայրը լուսաւորչական է , միւսը
ուսաւորչական : Այս վերջիններս կ'ամուս-
նանան , ըստ օրինի Ռուսադաւան պիտի
լինին Ռուսական եկեղեցին այլ եւս սուր-
հով ճանապարհի մէջ է :

Բայց մենք թողունք զանոնք եւ դառ-
նանք Թիֆլիս , պատմելու հետաքրքրական
դէպքեր :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԶԵՆՈՒՈՐՆ ԵՒ ԳՈՐԾԱՒՈՐԸ

Վերջերս հեռագիրն հաղորդեց թէ եր-
կու սոսկալի պայթուիներ տեղի ունեցած
են հանքերու մէջ , մին ի Ֆրանսա , եւ միւսն
ի Պեճիկ , բազմաթիւ զործաւորաց մահ
պատճառելով : Այս առթիւ Պ . Կայծոռիկ
կուտայ մեզ ի հրատարակութիւն գեղեցիկ
թարգմանութիւն մը մի յօդուածի զոր
Ֆրանսացի հեղինակ մը գրած է 82ին նը-
մանօրինակ աղետի մը առթիւ :

Եւ այդ աղետներն միթէ՞ միայն եւրո-
պացի՞ օրծաւորաց համար են : Կարգալով
Պ . Կայծոռիկի թարգմանութիւնն արդեօք
մեր ընթերցողը չպիտի յիշեն այն տարա-
բաղբիկ հայերն որք անցեալ տարի զոհ ե-
ղան Հայտար-Յալայի երկաթուղոյն : Ի՞նչ
եղան նոցա կիներն ու զաւակներն . ո՞վ կը
յիշէ :

Ազատութիւն , Հաւատարմութիւն , Եղ-
բայրութիւն . . .

Գեղեցիկ են արդարեւ բառերն , այլ
անիրաւ , սուտ եւ անգութ : Զինուորական
կենաց անբաժան ընկերն է փառքն : Երբ
զինուորն , ի Ֆրանսա , ճանձրացած , ի մարտ
կ'ընթանայ , մի վրէժ կ'առնու նա : Եւ ,
որքան որ ալ աննշան լինի , զինուորական

համազգեստին տակ մի գնդակով ի գետին
տուղալով գիւղացին կ'ստանայ գարձեալ
մի մաս անմահութեան , մի մաս՝ որ ո՛րքան
ալ լինի չի՛չին՝ անմահութիւն է կրկին : Ե-
թէ՞ փառք չեն ստեղծուած իրեն համար ,
գէթ փառաց համար ստեղծուած է ինքն .
փառաց մէջ եւ փառաց համար կը զոհէ
մարմինն , կը հեղու տրիւնը , կ'արձակէ հո-
գին . . . : Յաղթապան՝ դիւցազանց ան-
մուաց անունն՝ հազարաւոր զինուորներու
անուններն կը յիշեցնէ , հազարաւոր քաջա-
րի այլ անշուք սրտերու՝ որոնց յաւիտենա-
կանութիւնը միայն կը տեսնէ եւ կ'որոքէ
վերջին քունն . . . :

Զինուորն . — Երգերու մէջն է նա , բերթ-
ուածներու մէջն է նա . սրտերու մէջն է
նա : Տղայք հոգեզայլ կը նային առ նա .
ծերք կը յարգեն զնա . կանայք կը սիրե՛ն
զնա :

Հոմերոսն ունի նա . Հիւկոն ունի նա :

Եթէ մահուան հետ կը խաղայ , գիտէ
նա թէ կրնայ մի օր , բաղդին բերմամբ , մա-
րաջխտի գաւազան մը գտնել իւր պայուս-
ակին մէջն : Եւ յետոյ , իրեն համար են
յաջորդական հաճոյք եւ հեշտութիւնք , հա-
մազգեստ եւ բանակ , սուր եւ սուրին , վա-
ռօք եւ թնդանօթ , մեծահնչիւն փողերու
մնչիւնն ու շառաչիւնն , եւ , ի վերադարձին ,
յաղթութեան գոհութիւնն անշա՛րի եւ ան-
գին : Զինուորն , ջերմ ազօթից մէջն է նա ,
դամբանականաց մէջն է նա . սուգերու
մէջն է նա : Միշտ եւ ամենէն , գոթ , կա-
րկեցութիւն , քաջալեր , գովեստ , գգուանք
եւ յարգանք լոկ կը քաղէ նա : Ինքն իսկ է
Պատմութիւնն , փառաւոր պարտութիւն լի-
նի այն թէ յաղթութիւն դիւցազնական , կը
կոչուի նա Աղեքսանդր կամ Լէոնիդաւ , Ար-
պեղղէս կամ Թէր Տոփիլէ , Կեսար կամ Վիր-
կինէթօրիքս , Պոնտոս կամ Ալեքիս , Մեծն
Կարոլոս կամ Ռօլան , Բամբուլիւն կամ Ռօն-
սլոփ , Նաբօլէոն կամ Նէյ , Աւսթրիոյ կամ
Վաթէրլո . եւ իրեն համար՝ ամենամեծ քա-
ղաքաց կեդրոններն ամպահերձ իթոյներ ,
վեհ ու փոփ տաճարներ կ'ամբառնան , մըշ-
տապեւ յիշատակարաններ կը բարձրանան :

Զինուորին համար՝ այս ամէնն ահա՛ :
Իսկ գործաւորին համար . . . — Է՛հ ,
Ոչինչ . . .

Ոչինչ . . . : Այո՛ , ոչինչ , միշտ ոչինչ . . .
Եւ ո՛չ իսկ հետք մը , եւ ո՛չ իսկ պատրանք
մը , եւ ո՛չ իսկ փոխարինութիւն մը . . . :

—Այլ քեզ համար , թշուառական , յա-
րատեւ անիովիս եւ միթն պատերազմն
ընդդէմ յաւիտենական դառն եւ տխուր
աղքատութեան , եւ տանջանքն այն տարօ-
րինակ զոր կ'անուանեն Ապատութիւն : Ա-
հեղակազմ՝ գործարանաց հրաշնչ հնոցնե-
րու գէ՛մ տփգոյն , մաշած իթր ի տենդէ ,
կամ հանքաց խաւարին խոնաւ խորութեանց
մէջ ջլաքելի , միշտ եւ անդադար , անդադար
եւ միշտ , համբերատար մըջիւն , անխոնջ եւ
անվճատ , դառնագին աշխատանաց կը տու-
կայ գործաւորն , ամուսնէ եւ մուսնէ թխա-
ղէմ , միշտ քրտնախոր եւ գլխիկոր , միշտ
լռին եւ գեանահայեաց , — է՛հ , երկնից կը
նային միթէ անոնք որ առ ոչինչ կը յուս-
սան . . . : Արշալոյսէն ցլերջալոյս , Ժաքի՛ն-
օրք կը քանի գործարանին մէջ , Ութ տարե-
կան մտած է անդ , մեռնելու համար դուրս
պիտիւնէ անտի , եթէ մի գոթալայն պայ-
թում , մի ահուելի փլուզմն նորա մարմն ու
ոսկորները չը ճկեն անժամանակ : — Եւ չի՞ք
ամենաչին ընդմիջում մ'ընդ մէջ չարա-
չար ճգանց եւ աղիւղորմ փահուան . . . :
Զի՛ք դադար :

Կատաղի պատերազմ մ'է արուեստա-

գիտութիւնն որ չը գիտեր կանգ առնուլ, որ չընդունիր գինացուլ: Կոտորի նման՝ կը լափէ իւր զաւակներն յանուն յոռափորման: Կան «Ժամն է գրամ» (Time is money) որ 19րդ դարու ընդհանուր մարդկութեան միակ նշանատառն է, եւ ազգաց ինքնակործան պատերազմին առաջին բառն ու միակ պատճառն է: «Ժամն է գրամ»: Այն օրէն, յորում առաջին շողերից կաթնայն չարժիլ ու չարժել սկսաւ, սակաւ առ նախա համայն մարդկութիւնն բռնուեցաւ նորա մըլտաթաւալ անխնայութեամբ անգնորդութեամբ, եւ, այլ եւս, կապուտ կամ սուրճ երկնից տակ, մեքենայք պիտի գործեն չարունակ մինչեւ որ աշխարհ լինի հիմնայատակ: — Ո՛ր Բրոմեթէոս, ամառ թէ աշուն, ձմեռ թէ գարուն, մի՛ վայրկեան միակ կանգ առնուր: Գու գործաւոր անին, Իքսիօնի անին: Օ՛ն, գործիդ գլուխն անցի՛ր, դործաւոր, անցի՛ր յաւիտենական գործիդ գլուխն: Գնա՛ միշտ, մի՛շտ եւ միշտ, հանք փորել կամ հանքածուխ նետել անդուլ առ մեկնակուլ անդունդին մէջ, ի՛նչ փոյթ թէ լիւրժի է հնոցն, թէ կը ճարճատէ, թէ ճայթել կ'սպառնայ նա: Տաքցո՛ւր, տաքցո՛ւր, տաքցո՛ւր միշտ: Պողպատն կը հեծէ, կը կռնչեն օղակներն, կը շառաչեն լծակներն եւ գետինն իսկ կը դողդողայ: Բայց ի՛նչ փոյթ, տաքցո՛ւր, տաքցո՛ւր, տաքցո՛ւր միշտ: Գի՛ Ժամն է գրամ: . . .

Եւ, եթէ մի օր, նիւթն, եթէ նիւթն իսկ, իւր կրած անվերջ տանջանայ, անխիղճ չարչարանայ տակ գոգցես ամօթապարտ, գայ վրէժ առնուլ, բաղխէ, ջախջախէ ամէն բան, եւ թօթափի հրաշէկ, գործաւոր դու, ամսացած, կայծակնաճար մի կոճղ գարձած անշունչ մարմինդ պիտի հանեն փլատակաց ներքեւէն, քաղաքային իշխանութիւնք ի պաշտօնէ պիտ'ստուգեն նոյնութիւնն, եւ պիտի թաղուիս եւ սովորական դատերէ, նպաստաւոր կամ աննպաստ փաստերէ յետոյ, պիտի վերաշինուի ապահովեալ գործարանն՝ անմխիթար կերպիւ յառաջ տանելու համար վաճառականութիւնն՝ արուեստագիտութեան այն նորակառոյց տաճարին մէջ Եւ գործառնանալով Բաբելոնի քաղաքը անվերջ աշտարակ տուալին մէջ, այն չարագէտ տարին Շահ ու Չէնի կողմն պիտի արձանագրուի եւ բաժնետէրաց շատերն, յուզեալ եւ մըտախոհ, պիտի ըսեն թէ իրենց համար կարի անարդար են երկինք

Իսկ դո՛ւ, դո՛ւ որ գործաւոր էիր, չընչաւոր եւ բանաւոր էակ, եւ արիւնտաղափ մտերու, միջրած ոսկորներու կոյտ մ'երեւան եկար, կինդ եւ զաւակներդ գերեզմանիդ վրայ արտասուելու մխիթարութիւնն անգամ չը պիտի ունենան: Գի, քեզ նման, փլատակաց տակ նահատակ դարձող քսան ընկերացդ՝ դիակացն անձանաչելի խառնուրդին հետ, մի եւ նոյն մահատուփին եւ մի եւ նոյն լայն ու մաշկ փոսին մէջ՝ ճանաչելով՝ վերտառութեան ներքեւ պիտի քնես յաւիտենական քունն

Չինուորն՝ զրօշակն ունի իրբեւ պատանք: — Իսկ դո՛ւ, գործաւորդ, անտէր մեռելոց պատգարակն

Չինուորն՝ օրակարգ ու մահուան տարեգարձ ունի: — Գործաւորն . . . — է՛հ, աղքատին սուգն օրէն է պահել

Թնդացէ՛ք թմբուկը, ի պատիւ քաղաքացոյն որ մարտի գալտին վրայ գլորեցաւ: — Այլ լեցէ՛ք, զի չեն արժանի ողբոց, այն թշուառ արարածներն որք զժողաշունչ կաթնաներու պայթման, կամ խաւարին ու խորին հանքերու գահավէժ տառալման տակ կը խորտակին

— Ժողովուրդ, ահա՛ թաղման հանդէսդ: — Գոչէ՛ դարձեալ որքան կ'ուզես: Ազատութիւն, Հաւատարմութիւն, Նշքայորութիւն:

Թարգմ. ԿԱՅՈՈՒԿ ԺԻՒ, ՏԸ ՄԱՐԹՕԼՏ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Աղաւթ-Լուսնի կողմանէ Գերմանիոյ Խոր. հըրդարանի նոր երեսփոխանը ամէն ալ ջերմ կուսակիցներ են Ֆրանսայի: Աղաւթ-Լուսնի միանգամ եւս բողոքեց ընդդէմ իւր բռնի միութեան Գերմանիոյ հետ: Այդ ընտրութիւնները մեծ յաջում պատճառեցին ի Գերմանիա: Մերոնի կայսրը՝ խորապէս զգածուած է: Միլիտաները միճացան, Աղաւթ-Լուսնի դոյրազին միշտ Ֆրանսա կը գոչէ, եւ Ֆրանսա ահազ կերպով զինեալ ժամէ ժամ կ'սպասէ այն մեծ բռնի յարում իւր վրէժը պիտի լուծէ Գերմանիայէն:

Աղաւթ-Լուսնի ընտրութիւններն աւելի եւս բորբոքեցին Ֆրանսացոց սրտի անշնչ հորն: ամբողջ Ֆրանսա գոռոզութեամբ կը տեսնէ որ Աղաւթ-Լուսնի ըմբոստ գերմանական բռնաբարութեանց, կը զոհէ ամէն նիւթական շահ եւ կը վերանորոգէ իւր զայրազին բողոքը:

Գերմանական լրագիրք շատ տխրած են Սթրասբուրգի պաշտօնական լրագիրք կը շնչէ այն փոքրամասնութիւն որ քուէարկած է ի նպաստ գերմանաֆիլ գերման երեսփոխաններուն: անամթութիւնն այնքան առաջ կը տանին պաշտօնական լրագիրք որ շատ մը «բարիքներ» կը խոստանան այդ փոքրամասնութեան: Սակայն Ֆրանսացիք կարող են պարծանօք դիտել թէ՛ այդ փոքրամասնութիւնը Ֆրանսացիք չեն կապուր ալ գերմանք: — Այս կը բաւէ: — Ընդդէմ Աղաւթ-Լուսնի ճնշողական միջոցներ ձեռք կ'առնու Գերմանիա: — Բայց Աղաւթ-Լուսնի կը սուրբ ամէն տառապանաց, հաւատք ունի թէ պիտի փրկուի: Արդէն Պիզարը իշխանն ըմբռնած է որ Մէյը Ֆրանսայի սրտին վրայ անբաժնի վէրքով է:

— Գերմանական Խորհրդարանի համար երեսփոխանական ընտրութիւնք յոյժ գոհացուցիչ են Կառավարութեան համար: Սակայն Կառավարութիւնն այդ արդիւնք ձեռք բերելու համար ի գործ դրած է ամէն անսով նիւթական եւ բարոյական ճնշում, թէ՛ օլէտեւ բարոյական ճնշումներն աւելի մեծ քանակութեամբ գործածուած են: Չինուորականք չըջողայնով դիւզերն ամէն ուրեք կը յայտարարեն թէ: Կայսրը վերջին տատիճանի տխրած է տեսնելով որ երեսփոխանք կը մերժեն եօթնամեայ զինուորական ծառայութիւնն: Եթէ այդ օրէնքը մերժուի նաեւ նորընտիր երեսփոխաններէն, այն ատեն պիտի փճանայ այն մեծ գործը, զինուորական հսկայ շէնքն որոյ կառուցման նուիրած է Կայսրն իւր ամբողջ կեանքը: Եւ երբ այդ շէնքն հիմնայատակ կործանուելու վտանգին ենթակայ է, Կայսրը սրտի ցաւէն անմիջապէս պիտի մեռնի: — Եւ ժողովուրդն որ կը սիրէ իւր Կայսրն, հաւատացոյն:

Պատերազմի ուրուականին ալ կը դիմէին պաշտօնեայք վրդովելու ժողովուրդի երեւակայութիւնն: այն օրն յորում մերժուի եօթնամեայ ծառայութիւնը, պատերազմը պիտի սկսի Ֆրանսայի հետ:

Կառավար մը տալու համար թէ ո՛ր պիտի հանձնարեւ միջոցներու կը դիմէին տեղական իշխանութիւնք քուէներ կորցելու համար ի նպաստ Կառավարական ընտրելիներու, պատմենք հետեւեալն: Ամեն ուրեք տղազիր միօրինակ թերթեր կը բաշխուին:

Թերթին ճակատը կը գտնուի պատկեր մը: մէջ տեղը, Կայսրն, Պիզարը եւ Մուլ-

քէ իրարու ձեռք կը սեղմեն եւ եւանդագին ցոյցերով կընդունին գործա. որներէ, գիւղացիներէ, ուսանողներէ: եւ քաղաքացիներէ որք զէնք կ'առնուին: Սակայն նշանակութեան արժանի երկու պատկերներ կը գտնուին մէջտեղի խմբակին աջ եւ ձախ կողմը: Մէկ կողմը, կը տեսնուի գիւղ մը բոցերու մէջ. կին մը եւ մանուկներ թեւերին կը գալարեն յուսահատանօք, մինչդեռ Ֆրանսացի զինուորներ կ'առնուին կը տանին կող մը եւ ալիւրի պարկեր: Միւս կողմն, ալճերիացի զինուոր մը կը բռնաբարէ կին մը՝ զիւղացոյ մը գիտին տոջեւ եւ ի ներկայութեան սպայի մը որ հանդարտօրէն ձի կը հեծնէ: Պատերազմի աղետից այս նշանաւոր տեսարանին շուրջը գրուած են հետեւեալ տողերն: «Ներսիսի զրեթէ-բոլը պետութեանց ահագին սպառազինմանց եւ պատերազմական պատրաստութեանց հանդէպ, Խորհրդարանին ընդդիմաց իր կուսակցութիւնք փորձեցին նուազեցնել զօրաց յաւելումն զոր Կայսրն անհրաժեշտ դատած էր, յետոյ աւելցան շնորհեցին զայն երեք տարուան համար, երբ Կայսրական Կառավարութիւնը, կը յայտարարէր թէ եօթն տարուան համար անհրաժեշտ էր այդ յաւելում: Այս քուէարկութեան պատճառաւ մեր երկիրն ի՛նչ վտանգներու կ'ենթարկուի: Մեւ լեւաֆայ Բեթլեհայմ-ը արախալէնց զուռայ զայն: Ուստի, թող նա՛ որ տակաւին կը խորհի 1870ին իրենց արիւնն եւ իրենց կեանքը տուող զիւղացւանց վրայ, նա՛ որ համոզուած է թէ պատերազմական գործոց մէջ մեր զիւղացին Կայսրն եւ Մուլքէ մարեջախտն աւելի ձեռք առնուին քան իօճէն Ռիսդէր եւ Վիտտ-հորսթ, նա՛ որ պատրաստ է յառաջ խաղաղ պաշտպանելու համար մեր սիրելի հայրենեաց անկախութիւնն եւ պահպանումն, ոչ միայն առ երեսփոխ, այլ գործնականապէս, թող նա՛ իւր քուէն տայ . . . երեսփոխանին: Ուրիշ թուղթ մը, որ նոյնպէս ամեն կողմ տարածուած էր, խօսքը կ'ուղէր գերման երկտասարդ ուհեացոյ: Կըսէին նոյն թէ, ընտրող չլինելով հանդերձ, կընային մեծ ծառայութիւն մատուցանել հայրենեաց՝ գործածելով իրենց ազգեցութիւնն որպէս զի իրենց հարք, եղբարք եւ նշանածք քուէարկեն եօթնամեակի կուսակիցներուն ի նպաստ: «Ձեր իսկական շահը կը պահանջէ զայս, կ'ըսէր թուղթն, որովհետեւ եթէ եօթնամեակը մերժուի, պատերազմը պիտի հասնի իւր բոլոր աղէտներով: Ֆրանսացիք դարձեալ պատրաստ են յարձակիլ Գերմանիոյ վրայ եւ նշանած, իբրեւ քաճառած, ալ զիբար անհրաժեշտ այս աշխարհէս վրայ:»

— Վիլհէլմ Կայսեր ծննդեան 90րդ տարեդարձը շնորհաւորելու համար Ռուսիոյ կողմանէ Պերլին պիտի երթայ Միքայէլ մեծ-Գուբսը, Կայսեր հօրեղբայրն: Այս այցելութիւնը կը համարուի բարեգուշակ նշան մը խաղաղութեան պահպանման:

Գերմանիոյ զիւրանադիտական չըջանակները չեն կարծեր որ խաղաղութիւնը վերդովի: տէրութեանց յարաբերութիւններն այնպէս անկեղծապէս մտերմական են որպէս էին վերջին տառնապէս առաջ: Սակայն ժողովուրդն այսքան լաւատես չէ: Գործերը միշտ կայուն վիճակ մը ունին: Ամէն ոք կը յուսար թէ ընտրութիւններէն վերջ առեւտրական գործերը նոր մղում մը պիտի առնուին, բայց այդ յայտերն ի դերեւ ելան: միայն պօրտան լաւ վիճակ մը ունի:

— Ներից Կայսերաց դաշնակցութիւնը բոլորովին լուծուած է:

Ահա այս վիճակի մէջ կը գտնուին թե-
մ րու վարչական յարաբերութիւններ Զմիւռ.

նիւյ հետ մինչ գալով անոնց առեւտրական յարաբերութեանց՝ առաջիններուն չափ ընդհանուր չ'են։

Թէեւ Չմիւսնիւյ մեծահարուստ վաճառականներ, դրամատեսարներ իրենց գործառնութեանց մէջ կը կարօտին ի շրջակայս գործակալներու եւ մանրավաճառներու, բայց այդ պաշտօններու համար կ'ընտրեն բնականաբար թուրքեր եւ յոյներ, երբ, ներուր մեզ ըսել, չայլ ոչ վարկի համար վատահաճութիւն կ'ազդէ, ոչ ալ նոյն տեսակ գործերու ունակութիւն եւ փափաք։

Յուսալի այլ ստոյգ իրողութիւն մ'է թէ թեմաքանակ հայեր, մանաւանդ մի քանի տեղեր ընդհանրապէս աւելի կը սիրեն դերձակ, սափրիչ, դարբին եւ այլն լինիլ քան թէ առեւտրով զբաղիլ։ Իրաւ է որ ասոր համար կարեւոր են ընչ շատ դրամագլուխ եւ ունակութիւն եւ նա որ զուրկ է չնչին դրամագլուխ կը հարկադրի ստէպ ձեռքի աշխատութեամբ ճարել իր ապրուստ։

Սակայն ուղղութիւն, բարոյականութիւն եւ խնայողութիւն այնպիսի հանգամանքներ են, որոնք վարկի համար պէտք եղած ամեն վատահաճութիւն կրնան ներշնչել, այսինքն մէկ խօսքով դրամագլուխ ամեն պակաս ընուէ, մինչ հայուն ունակութիւնն առեւտրի մէջ անժխտելի է եւ անվիճելի։

Իրաց այս փիճակին մէջ մեզ այնպէս կը թուի թէ, կարեւորագոյն միջոցն է թեմաքանակ ազգայնաց կրթութեան նոր զարկ մը տալ, որպէս զի անոնք ոչ թէ արբեցող արհեստաւորներ, իրենց փիճակին համեմատ՝ շատ եւ գանդաղ աշխատաւորներ մնան, այլ պարկեշտ, ուղղաբէր, խնայող եւ խոհեմ ընկերական մարդեր դառնան։

Այս կրթութեան հոգ՝ յայտնի է թէ Չմիւսնիւյ Ազգ. Վարչութեան կը պատկանի, մինչ մենք վարչութիւններէ հրաշք սպասելու սովորութիւնը չ'ունինք թէեւ, սակայն ակնյայտ կ'երեւի որ ողջովն ջանք մը կրթութեան մեծ միւտմ մը պիտի տայ ի թեմաքան եւ անոնց դպրոցներու վիճակին վրայ բարեփոխութիւն, ու հետեւաբար ազգայնաց նիւթական ու ընկերական վիճակին մէջ ալ մեծ բարելաւութիւններ եւ արդիւնք յառաջ պիտի բերէ։

Թեմքան մէջ միայն Ազգէհի ն է, որ նիւթապէս գոհացուցիչ վիճակ մը կը ներկայէ, թէեւ այս վիճակ արդիւնք է ինչքան տեղական պայմաններու, նոյնքան ալ ազգայնաց բարեպաշտ եւ խնայող ոգւոյն։ Բայց քանի քաղաքակրթութեան հետ մոլութիւններ եւս անդ ծաւալին եւ անշուշտ այդ օրն ալ պիտի գայ Ազգէհի, չ'գիտենք թէ այդ ոգին ինչ աստիճանի ապահովութիւն պիտի կրնայ ապրել։

Նաեւ որ եւ իցէ միտում չ'ունինք թեմքան հայեր անպատուելու կամ քաղաքներու, մանաւանդ անոնց մէջ կը ճանչենք յարգելի եւ ազնիւ ազգայններ, բայց երբ կը դիտենք թէ մեծ ամասնութիւնը կը հեծէ չեղաւորութեան ու թշուառութեան մէջ, երբ կը տեսնենք թէ ամեն նպատաւոր պայմաններ անպակաս են անոր այդ վիճակին բարեփոխութիւն մը բերելու, այլ ջանք եւ կամք միայն հարկաւոր են, երբ կը նշմարենք թէ այդ պայմաններու հակառակ ու զխաւորէն, այն է Չմիւսնացի հայ վաճառականներու մեծաքանակ դրամագլուխներէն օտարը գիտէ օգտիլ, իսկ թեմական հայն այդ օգուտներու միայն կը սիրէ ծառայել ազգայնաբար, կը կարեկցինք իր վիճակին վրայ եւ այդ վիճակին դարման մը տալ կը կարծենք, ներկայիս համառօտակի պարկեշտ անոր ինչ ինչ կողմերն եւ միան, գաւալին առ այս ձեռնհաս իշխանութեան ուղադրութիւնը խնդրելով։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՔԱՄԱՌՈՒ ՔԱՌԻՊԱ

Արդէն հաղորդած ենք թէ Բաֆայէլ Պատկանեան (Քամառ-Քաթիպա) Մուկիմ կը գտնուէր անձնական տկարութիւնը դարմանելու համար։ Մուկիմայի հայ գաղթականութիւնն յունուարի 3ին ճաշկերոյթ մը տուած է «Մայր-Արաքսի» ժողովրդական բանաստեղծին։ Ճաշը շատ փառասեր եղած է։

Ճաշի ժամանակ սեղանի վրայ դրուած է կերակրոց ցուցակը պատկերազարդ, որոյ մի կողմն Արարատ լեռը փորագրուած — ի հարկէ ձիւնապատ — միւս կողմը զանազան նուագներ եւ մի պսակ, իսկ դոցա մէջտեղը բանաստեղծին գրութիւններու ցանկերը։

Ճաշին ճոխ բազմաթիւ կերակուրներու անուանց մէջ կը կարդացուի եղեր — «Բանշ» — լա Պապիանեան»։ «Ընթերցեալ ալ Քամառ-Քաթիպա»։

Ճառախօսութիւններ բազմաթիւ եղած են, իսկ բանաստեղծը կարգացած է մի գեղեցիկ ոտանաւոր «Գուսան» վերնագրով։ — Ամբողջ երեկոյթն յոյժ գոհացուցիչ անցած է։

Իսկ Թիֆլիսէն մեզ կը հաղորդեն թէ տեղական իշխանութիւնք աննպաստ են Քամառ-Քաթիպայի։ Ռուսահայք կ'ուզեն տօնախմբել փառաւոր կերպով իրենց — եւ ամենուս — պաշտելի բանաստեղծին գրական գործունէութեան 55րդ յիշատակն։ Այժմ կ'ովկասեան իշխանութիւնք արգելքներ կը յարուցանեն ընդդէմ տօնախմբութեան եւ մինչեւ իսկ կ'արգելուն ժողովրդեան նուէրներու հաւաքումն։

Եւ այդ ամէնքը կ'ընեն Պուլկիներու, Լէրմոնովներու հայրենակիցներն։ Ահա՛ Ռուսիոյ քաղաքակրթիչ նշանակութիւնն Ասիոյ վայրենի ցեղերու մասին։

ԿՐԾՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ

Կարսի շրջակայներէն այն մահմէտականը որոց հայրերն 60-70 տարի առաջ հայ բրիտանականներ էին եւ յետոյ կրօնափոխ եղած են, այժմ սկսած են հետզհետէ վերադառնալ իրենց նախահայր կրօնին վերադառնալ։ Այդ մահմէտականներն մինչեւ ցարդ կ'էս հայ անուն կը կրեն, օրինակի համար, Ալի-Սարգիս, Կարապետ օղլու, Մէհմէտ Յովհաննէս օղլու։

Օլթիի շրջակայներէն Օրթու գիւղի մի քանի հայ-մահմէտական ընտանիքներն եւս վերջերս վերադարձած են հայ եկեղեցւոյ գիրկն։

Եւ հայեր որք մահմէտականութիւն կ'ընդունին։

Նոր Պայազիտի գիւղերէն մին, Թուրք-ղանլի կոչուած գիւղն հետաքրքրական պատերազմի մը դաշտը կը հանդիսանայ այս վերջին օրերս։

Այդ Թուրք-ղանլի կոչուած գիւղի բնակիչք ամէնն ալ Թուրք են — Երթուրք կ'ըսուի ի Կովկաս կը հասկնան թաթար, թուրքմէն ցեղերու խառնուրդ մը եւ ոչ թէ ինչ որ Թուրք կը կոչուի Տաճկաստանի մէջ։ — Անցեալները մի օր երկու հայեր կը ներկայանան այդ գիւղն եւ կը յայտարարեն թէ իրենք ընդունած են իսլամական կրօնն որոյ կը վկայեն իրենց ձեռքը գրուած վկայականները, մոլլաներէ ստորագրուած։ Այդ հայերէն մին իւր Արզուման

անունը փոխած է Մէհմէտի, իսկ Պողոսն եղած է Ալի։ Խեղճ գիւղացիներն անձառաւարակութիւն ունին։ ալ ինչ հացկերոյթներ, ինչ նուէրներ այդ նորադարձներու։ Եւ ասոնց ուրախութիւնն Այդուիսի խընջոյթի մը երբեք չէին հրաւիրուած։

Բայց աւա՜ղ եւ ո՛չ իսկ Թուրք-ղանլիի մէջ անխառն ուրախութիւն կայ։ Թուրք-ղանլիի գործողութիւնն մը ունի, այն է իւր մօտերը կը գտնուի մի գիւղ Բասար Գէլար անուամբ որոյ բնակիչք ամէնն ալ հայ են եւ ինչ որ անխորթելի չէ, մի ընչ տաք գլուխ հայեր։ Սքա կ'իմանան թէ իրենց կրօնակիցներէ երկուքն «երջանկաւ թեմաքանին» մէջն են, եւ ինչ գնով։ — Մի. թէ այդ կարելի՞ է։ Եւ ահա՛ մի ցերեկ մեր գիւղացի հայերը սրօք եւ բրօք գինեալ եւ իրենց ատենապետ ունենալով իրենց գիւղապետը կանոնաւոր յարձակում մը կ'ընեն Թուրք-ղանլիի վրայ։

Յանկարծակիի կուգան Ղանլիցիք, բայց չիմթել չեն գիտեր։ Կը ժողովեն ինքզինքնին եւ կը պատրաստուին դիմադրել։ «Ճառախօսութեան» բաւական սաստիկ կը լինի երկու կողմէն ալ նահատակներ իրենց արեւմտ կ'ուզեն պատերազմի սուրբ դաշտը։

Մինչ այս մինչ այն, բիրերու բռնկումը կը հասնի յունկն գաւառապետին որ անմիջապէս կը փութայ յասպարէզն արեւմտ։ Պատերազմողները դադար կ'առնեն ի տես պատկառելի պետին։ Արդէն յոգնած իսկ էին։

Փառաւապետը կը ձերբակալէ նախկին Արզումանն եւ Պողոսն որոց հոգւոյ վրիւթեան համար խեղճ թուրքեր ու հայեր մեռեալ ու վիրաւորեալ ինկած են։ Այդ երկու նորադարձները կը դրկուին ի բռնա ուր պիտի սպասեն քննութեանց վաճառին։

Իսկ Ղանլիցիք չեն վհատած։ Կը շարունակեն նուէրներ հաւաքել եւ պահեստի տալ իրենց մօլլային որպէս զի երբ ձերբակալեալք ազատին բանտէն, ոչ մի նեղութիւն չկրեն եւ իրենց հոգւոյն վրայ մտածեն։

ԴՐԱՄԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցն արդէն տեղեկութիւններ հաղորդեց դրամանեղութեան մը մասին։ այժմ մեզ կը գրեն Թիֆլիսէ թէ այն տեղ մի հայ քահանայ, Մանգակունի անունով, ձերբակալուած է եւ բանտարկուած, իբր մեղաւորից դրամանեղներու։

Այս գործն օրուան մեծ խայտառակութիւնն է։ Այդ չքահանայն հանրածանօթ եղած է արդէն իւր անբարոյական վարքով։ Թիֆլիսի Ս. Առաջնորդն արդէն մի քանի անգամ ուղած է կարգաւոր ընել այդ չքահանայն, սակայն — եւ չենք զարմանար — Էմիլիանայ Սինօղը միշտ պաշտպանած է զնա։

Թէ՛ յերեւան եւ թէ՛ ի Վաղարշապատ մի քանի հայեր ամաստանեալ են այս գործոյն մէջ։ ձերբակալուած են տասն անձինք իբր դրամանեղք։

Սքա Երեւանի մէջ գործարան մը հաստատած են կեղծ փողերու, Կը լինեն արծաթ 20 կոպէկնոց (88 փարայ) եւ թղթաղրամ 25 րուպլինոց (275 դր.)։ Թղթաղրամներն այնքան լաւ կեղծուած են եղեր որ իսկականէն զանազանել շատ դժուար է։ Մանգակունի չքահանային պաշտօնն եղած է այդ կեղծ դրամները Թիֆլիսի մէջ քել։

Դրամանեղները կը շինեն եղեր նաեւ օսմանեան եւ անգլիական օսկիներ։

ՀԱՅՔ

ԵՒ ՈՒՌՍ-ՊՈՐՍԿԱԿԱՆ ՊԼՏԵՐԱԶՄԸ

Գ. (*)

Շատ երկար կը լինի մի առ մի առաջ բերել այն ամէն բարիքներն զոր Արաս-Միրզա ըրաւ Հայոց ի հարկէ իշխանն իւր քաղաքական տեսութիւններն ունէր։ Նորա քաղաքական տեսութիւնը հայերը Պարսկաստանի հետ, զբաւեւ նոցա սէրն առ Պարսկաստան եւ պաղեցնել զանոնք ուսմանէ։ Այս քաղաքական տեսութիւններու հետ միասին Արաս-Միրզա անկեղծ կերպով կը սիրէր Հայերն։ 1827-28ին երբ Ներսէս եւ Լազարեան Ռուսաց սուրհմեկներու շնորհիւ կը գաղթեցնէին 40 հազար Հայեր Անգղիոյ կաթնէն զէպի Արարատեան նահանգն, Արաս-Միրզա շատ աշխատեցաւ որ այդ գաղթականները ինքն ինքն չընենայ։

Արաս Միրզա, ինչպէս նաեւ նորա նախորդները կը յարգէին Հայերն ո՛չ միայն նոցա երկրագործութեան, վաճառականութեան եւ արհեստից մէջ ունեցած արժանիքներուն համար, այլ նաեւ նոցա զինուորական եւ կառավարչական տաղանդի համար։ Պարսկաստանի մէջ Հայերն հասած էին զինուորական բարձր աստիճաններու, իբր փոխարքայ կը կառավարէին ամբողջ նահանգներ, մեծ զէր կը կատարէին զիւրաքանչիւրութեան մէջ, կը մատակարարէին Պետական գանձն եւ մինչեւ իսկ... Շահին կանանոցին մէջ ներքինի եւ ներքինապետի պաշտոն կը վարէին։

Ահաւասիկ քանի մը անուններն այն Հայոց որք Արաս-Միրզայի եւ նորա հօր Զաթալի Շահի օրով բարձր պաշտօններ ունէին Պարսկաստանի մէջ։

1. Իւսուֆ խան — Բաղդադի Արաղստանի։
2. Իւսուֆ խան (ուրիշ) — Թորձի-պաշի։
3. Մուսա բէկ — Թորձի պաշի։
4. Ալա-Կաշուր — Կերմանշահի Շահի։
5. Ալա-Իրրահիմ — Երզնկայի տէր։
6. Երզնկայի տէր (ուրիշ) — Երզնկայի եւ մատակարար Զաթալի Շահի կանանոցին մէջ։
7. Դաւիթ խան Միրզեան — Բաղդադի Բարձր Դրան բժիշկ։
8. Խուզաղատ խան — Կառավարիչ Ատրիպատականի գանապան գաւառներու։
9. Դաւիթ խան ասպետ — Թարգման էր Զաթալի Շահին եւ Պարսկաստանի կողմէ իրաւոր գետնան զրկուեցաւ Նաբոլէոն Ա. թով։
10. Զօհրաբ խան — Բաղդադի-Խաչիւր, այսինքն արքունի գանձապետ։ Զաթալի Շահի գանձապետն էր։
11. Զօհրաբ խան Վարդանեան — արքունի գանձապետ Սպահանի մէջ։
12. Ալա-Բահրամ ներքինի, ամիր զիւան-խանէ, այսինքն պետական զինանի զլխաւորը։
13. Զօհրաբ խան — Գուլամիի խանութ-բաշի։ Շահին արքունեանց սենեկապետներու զլխաւորն։
14. Իւսուֆ խան — ամիր Թորձիանէ, զըլ-խաւոր ինչպէս թափառողներու։
15. Զօհրաբ խան — ամիր Թորձիանէ։
16. Սպահալար խան իշխանապետ Ամասու-նի։ Շահի սենեկապետ։
17. Բէթան խան — Զօհրապետ։
18. Ալահադէրաբ բէկ — Զօհրաբ, այսինքն ինքնապաշտ։

19. Մանուշար խան, որ կը կրէր Ման-Վա-Վա-Վա-Վա, այսինքն նեցուկ պե-տութեան տիրոջն, այն աստիճան բարձրացաւ որ մի ժամանակ կը վա-րէր հետեւեալ նահանգներու փոխար-քայութեան պաշտօնը, Ռաշաի, Սպա-հանի, Լուստանի, Բակարիայի, Շուշ-տէրի եւ Դասֆիլի։

20. Սուլէյման խան Էնիլօղլուեանց, իբր երեւելի զօրավար այն աստիճան բարձրացաւ Պարսկաստանի մէջ որ կա-ռավարութիւնը նմա շնորհեց Սահ-Վա-Վա-Վա-Վա սուր պետութեան տիրո-ղան։ Երկար ժամանակ վարեց Շիրա-զի, Բակարիայի, Լուստանի, Շուշ-տէրի եւ Դասֆիլի փոխարքայութեան բարձր պաշտօնը։

Շատ երկար կը լինի մի առ մի թուել այն ամէն զինուորական, քաղաքական, զիւ-րաքանչիւրական բարձր պաշտօններն որք Հայերու տրուեցան։

Եւ այդ ամէն բարեաց փոխարէն ինչ ըրին Հայերն։ Այդ տեսանք։ Յիմարտար միացան Ռուսաց, առ ոտն կոխելով իրենց իրական բարիքն։ Այդքանը բաւական չէր, Հայերն էին որ ստակալի եւ պոճալի մատ-նութիւններով պատճառ եղան Պարսից բա-նակին պարտութեան։ Ո՞վ էր այդ Հայ մատնիչն։

Այդ մատնիչը, զոր կը յիշէ Մագաթովի ուսու կենսագրութիւնն, այն Հայն է որ կը կոչուէր Բայինդուրեան կամ Բահադուրեան Արի բէկ։ Նա Արաս-Միրզայի թիկնապաշտ էր։ Նորա նախապաշտ Բայինդուրը, կամ որպէս պարսկերէր կը կոչէին Բահադուրը, Սիւնեաց աշխարհէն գաղթած էր ի Պարս-կաստան եւ մանելով Պարսից ծառայու-թեան մէջ, եղած էր Շահի բաշ եւ նա-նաւոր զօրավարներէն մին նա յետոյ գնա-ցած էր Վրաստան եւ միանալով Դաւիթ-բէկի եղած էր Սիւնեաց ապստամբութեան պարագլուխներէն մին։

Այդ Բայինդուրի թոռներէն մին էր Արի բէկը։ Նորա պապին քաջագործու-թիւններն աւանդութեամբ մնացեր էին այդ տոհմի մէջ։ Արի բէկ տակաւին պատանի, հրապուրուած էր իւր պապի քաջագործու-թեանց յիշատակներովը, թողուց Ղարա-պաշն եւ գնաց Պարսկաստան քաղաք փոր-ձելու։ Վայելչահասակ, համարձակ մի պա-տանի էր Արի բէկ։ Եւ մի օր մը ձիարշախ ժա-մանակ կարող եղաւ զբաւել Արաս-Միրզայի ուշադրութիւնն, եւ մտաւ նորա թիկնա-պաշտներու խումբին մէջ։ Յետոյ հետզհե-տէ շատ դժուարին պարագայներու մէջ ցոյց տուաւ իւր քաջութիւնն եւ շատ սի-րելի եղաւ գահաժառանգ Արաս-Միրզայի։

Արաս Միրզա մեծ փառաբանութիւն ունէր իւր սիրելի թիկնապաշտին վրայ։ Երբ պար-սկներն արշաւեցին ի Ղարապաշ, Արի բէկ կը գտնուէր գահաժառանգի բանակին մէջ։ Իշխանը մի յոյժ կարեւոր գործ ունէր կատարելու։ Նա պիտի զրկէր մի շրջաբե-րական թուղթ Անգրիկոստեան Մահմետ-կան ցեղերու, խաներու, պէյերու եւ ազ-գեցութեան տէր ամէն անձանց, զբոցե-լով զանոնք յապստամբութիւն ընդդէմ Ռու-սաց։ Այս գործը շատ գաղտնի պիտի մնար եւ պէտք էր կատարել զայն ամենախտա-հելի անձի մը ձեռքը։ Արաս-Միրզան ո՛չ մէկ անձի, ո՛չ մէկ պարսկի այնքան վստա-հութիւն ունեցաւ որքան Արի բէկի։ Իբր իւր ամենամտերիմ պաշտօնեայն նմա յանձ-նեց այդ շրջաբերականներն հասցնել ամէն ուրեք։

Արաս-Միրզայի հաւատարիմ թիկնապաշտ

նահապին շրջան մը պիտի ընէր, պիտի անց-նէր Թալիշի, Բագուի, Դէրբէնի, Շիրվանի եւ Շաքիի գաւառներէն եւ յետոյ Տաղիս-տան պիտի հասնէր։

Եւ սակայն Արի բէկը չարաչար կեր-պով գործածեց իրեն շնորհուած փառաբա-նութիւնը։ Նա փոխանակ այդ գաւառներն երթալու, ուղղակի գնաց ի Գանձակ ուր բանակած էր Իշխան Մագաթով։ Յանձնեց Ռուսաց այդ թուղթերը, տեղեկութիւններ տուաւ նոցա Պարսից բանակի զինակի նը-կատմամբ։ Յայտնեց նոցա Պարսից բանակի բոլոր գաղտնիքներն, անոնց տկար եւ զօ-րաւոր կողմերն եւ թագաժառանգի դի-տաւորութիւնները։ Պարսկներն արդէն շատ մտնեցած էին Գանձակի եւ մեղք տե-սանք նախորդ յօդուածներունու մէջ թէ ինչպէս ուսուց օգտուելով երկու մատնիչ-ներու — որոց մին էր Արի բէկ — մատնու-թիւններէն, յարձակեցան Պարսից վրայ եւ յաղթեցին նոցա։ Այնուհետեւ Անգրիկո-կաս այլ եւս Ռուսաց էր։

Իշխան Մագաթով մեծ խոստումներով ընդունեց Արի բէկին իւր թիկնապաշտներու խումբին մէջ։ Պարսից թագաժառանգի սի-րելին եղաւ մի լաւ գործիք Մագաթովի ձեռաց մէջ։

Ե.

Ռուսը չգոհացան վանելով պարսկներն Անգրիկոստէն, ուղեցին մի մեծ հարուած տալ նոցա նոյն իսկ պարսկական հողին վը-րայ։ 1828ի դեկտեմբերի սկիզբները Մա-գաթով հրահանգ տուցաւ արշաւել Երասխի միւս կողմը։

Ձմեռնային արշաւանքը մի այնպիսի երկ-րի մէջ՝ որ զուրկ էր լաւ ճանապարհներէ, յանդուգն գործ մ'էր։ Մագաթով շատ դժուարութեամբ պիտի կարենար ձեռք բերել իւր ցանկացած յաջողութիւնն եթէ իրեն առաջնորդ չլինէր մի այնպիսի ճար-պիկ անձ որպիսին էր Արի բէկն։ Այդ ե-րիտասարդն երկար ժամանակ Պարսկաս-տան մնալով քաջ կը ճանաչէր թէ՛ պարս-կական աշխարհն եւ թէ՛ նորա բնակիչներն։

Իշխան Մագաթով իւր հետ ունէր սա-կաւաթիւ զինուոր, բայց անոնց միացան Ղարապաշի Հայ հետեւակներն եւ ձիարու-նները։ Դեկտեմբերէն մինչեւ յունուարի մէջ Մագաթով եւ իւր Հայ ու ուսու զինուոր-ները սարսափաշար ըրին Պարսկաստանն, ահապին աւար առին 1827ի գարնան վե-րջտինի սկսաւ ուսու-պարսկական պատե-րազմը։ Մագաթով հրաման տուցած էր իւր բանակը կազմել մեծաւ մասամբ Հայ կամաւորներէ։ Այդ պատուէր կատարուե-ցաւ։

1827 ապրիլի մէջ Մագաթով արդէն յաղթանակաւ ոտը կոխած էր դարձեալ Պարսից հողին վրայ՝ երբ ապրիլ 22ին հրա-ման տուցաւ Պարսկէնէն յանձնել զօրա-պետ Պանկրատիւնի իւր հրամանատարու-թեան ներքեւ գտնուած զօրաբաժինն։

1827 թուին վերջացաւ ուսու-պարսկա-կան պատերազմը։ Ռուսիա մեծ օգուտներ քաղեց։ Երասխ գետը նշանակուեցաւ սահ-մանագիծ երկու պետութիւններու մէջ։ Այդ գետի ձախ կողմը գտնուած բոլոր պարսկական խանութիւնները մտան Ռու-սաց տիրապետութեան ներքեւ։

Ռուսիա պատերազմական տուգանք դը-րաւ Պարսկաստանի վրայ։ Քառասուն հա-զար հայեր գաղթեցին Պարսկաստանէն եւ լեցուցին նոր գրաւուած երկրները։

Վերջացան Պարսից խաները, վերջացաւ

(*) Տես «Մատեն» փետր. 21ի թիւը։

նաեւ Հայոց մէջընկերու իշխանութիւնն . երկու հարիւր տարուան այնքան դիւցազնութիւնը յանգեցան մեկընկերու կորստեան : Հայ դիւցազնացի զաւակները , զրկուած իրենց իշխանութենէն ուրիշ բան ընելու կարող չէին , բայց եթէ մտնել Ռուսաց ծառայութիւններու մէջ եւ ստանալ աստիճան ու շքանշաններ :

Այդ փառասիրութիւնը մի օգուտ ունեցաւ : Մեկընկերու ծառայողները մտնելով Ռուսաց ծառայութեան մէջ , ծանօթութեան օրէնսդէպ եւ ազդեցութեան տէր անձանց հետ եւ կարող եղան ձեռք բերել մի մասն իրենց հայրենական կալուածներու :

Իսկ զաւակներն այն հայերու՝ որք իրենց արեւմտին հաստատեցին ուսանելն ի Կովկաս եւ Սինդրիովկաս , իբր փոխարինութիւն այդ բարեաց կը հայածուին իրենց ամենէն սուրբ զգացմանց մէջ , Հայոց կրօնը ու ազգութիւնն ամենաստորին մեքենայութեանց մատնուած են :

Վ Ե Ր Ջ

Տ Ա Գ Ն Ա Պ Ը

Փետրուար 27

Անցեալ շաբաթ առաւօտ Մաքի մամուլը ներքեւ էր երբ տեղեկանալով Պատրիարքի հրաժարականի լրոյն համառօտ կերպով հաղորդեցինք զայն : Այժմ կ'ամփոփենք թէ փետրուար 20ի ուրբաթ առուր զէպերն եւ թէ մի շաբաթուան մէջ այս խնդրոյ առթիւ ինչ որ անցած դարձած է :

Ուրբաթ առաւօտ փետր. 20 , Կրօն. եւ Քաղ. ժողովոյ խառն նիստը բաւական խռովայող եղած է : Կրօնական ժողովը պատրաստած է օրինակն այն գրոյն սրով պիտի դիմեն առ Պալատն : Քաղ. ժողովը ոչինչ ունի առարկելու ընդդէմ այդ գրոյն բայց կը հարցնէ Կրօն. Ազգովին :

— Յետոյ ինչ պիտի ընէք :

— Յետոյն կը մտածենք յետոյ , կը պատասխանէ Կրօն. ժողովն :

Անհաճոյ պատասխան Քաղ. ժողովոյ համար : Եթէ յանկարծ Կրօն. ժողովն յաջողի իւր աղերսագրով : Այդ օրն Աստուծան Ներսէս վարդապետ , Քարաղիչ Բերայի , կը հանդիսանայ Կրօն. ժողովոյ քաջալեզու անենաբանն :

Բայց Պատրիարքի հրաժարականը կը ծաղի անխնայ բառէ մը , ինչքան բառէն :

— Մենք խիղճ ունինք , կ'ըսեն եկեղեցականք :

— Ի՞նչ , գուր խիղճ ունիք , ես խիղճ չունիմ , կը պատասխանէ Պատրիարքը — վերջապէս կը պայթի — եւ կ'ընէ մէկդի :

Նուրբան էֆէնտի բուռնցքները սեղմած կը յարձակի Աստուծան վարդապետի վրայ :

— Դո՛ւ առաջաւեցիր Պատրիարքը :

— Ե՛ս :

Եւ յաջորդելով Նուրբան էֆէնտի ձեռքերը , Ներսէս վարդապետ կը քաշէ զնա Պատրիարքի առաջն . — երես երեսի պիտի գան , — կանանց կոխ :

— Ըսէ՛ք , Սրբազան , իմ խօսքերդու համար հրաժարեցաք , կը հարցնէ վարդապետը :

— Զէ՛ , չէ՛ , եթէ դուք համամիտ ալ լինիք Քաղ. ժողովին , ես չեմ կարող ձեռք հետ ըլլալ : կը բառէ՛ այլ եւս օրբան քաշեցի . խիղճս կը չարարէ զիս . կարող չպիտի լինիմ զաւակներու լացն ու կոծը ըսել , գիշերներն իսկ սարսափով պիտի անցնեմ :

Խրիմեան Սրբազան անմիջապէս , նոյն յուզման պահուն ըսած է Պատրիարքին .

— Թո՛ղ մ'ենէ՛ր Սրբազան , թող մ'ենէ՛ր , ասանկ բաներ իմ գլխուս ալ եկան : Ինչ որ կ'ընեն , Պատրիարքը ետ չառնուր հրաժարականը :

— Ես անանկ մարդ չեմ կ'ըսէ , հրաժարականս երբ կուտամ , ըմբաւ . ա՛յլ ետ չեմ առնուր :

Յուզում , շփոթութիւն , Պատրիարքարանի մէջ , Նուրբան էֆէնտի դեղնած , գունաթափ կը ձեռք դուրսը սրահը :

— Ի՞նչ ընեմ , ի՞նչ ընեմ , ես Պատրիարքին tuteurը չեմ (տատան չեմ ըսել կոյգէ) :

Պատրիարքը կը ժողովէ թուղթերն ու կը չուէ յերուսողեմատուն , իւր իսկական պաշտօնատեղին :

Ազգն անգլուխ կը մնայ . անիշխանութիւն , անհամաձայնութիւն , հոգ եւ կոխ : Ահա՛ այդ առուր ժողովոյ արդիւնն :

Եւ պէտք էր այդ օրն այդպէս լինէր : Եւրոպացիք իբր ճշմարտութիւն ընդունած են թէ՛ ուրբաթ օրը դժբաղդութեանց օրն է : Իսկ երբ ուրբաթ օրը կուգայ փետր. 20ին , միթէ խոհեմութիւն էր այդ օրը ժողովը ընել : Բանանք անցեալ դարու , 1787ի Պարզամտութեան եւ տեսնենք ի՞նչ պէս մեր հարց չար ու բարի օրեր որոշած էին :

« Ամսուր չար օրերն Հոռոմայեցոց առուր պահպանութեան . ո՛չ է պարտ ինչ գործելը այլ աղօթել եւ զգուշանալ եւ խնդրել յԱստուծոյ փրկել ի փորձութենէ . զոր յայտնեաց Աստուած Յետեայ քահանային « Իսրայէլացւոյն այսպէս » — Եւ Պարզամտութեան կը թուէ այն օրերն « Երբ ո՛չ է պարտ ինչ գործել , այլ աղօթել եւ զգուշանալ » եւ այդ օրերու մէջ կը կարգանք :

Փետրվ 2 եւ Ի չար է :

Ինչո՞ւ ուրեմն այդ չար օրն ընտրել այդպիսի կարեւոր խնդրոյ մը կարգադրութեան համար : — Ահա՛ ինչ կը նշանակէ չի հաւատալ նախնեաց աւանդութիւններու :

Այդ չարաբաստիկ օրէն վերջ Ազգ. ժողովոյ ատենապետն ու իւր ատենապետակիցներն օգի ի բոլին չարաչար աշխատեցան համբարխութիւն գոյացնել Կրօն. եւ Քաղ. ժողովոյ միջեւ . ի հարկէ զօհողութիւնը կրօնականներէն պահանջելով : Նիստ ի Բերա , նիստ ի Քուլ-Քարու , նիստ ի Ղալաթիա , ի՞նչ կ'ընէին : Ոչինչ գիտենք : Ամենակատարեալ դադարաւորութիւն : Եւ այս բնական է : Ատենապետներն գրեթէ ամբողջութեամբ Փռան-մասուն են : Գաղտնապահութեան արուեստը գիտեն :

— Բայց միթէ խորէն Սրբազանն ալ Փռան-մասուն է , որ այնպէս գաղտնապահ կը մնայ , հարցուցին մեզ ոմանք :

— Ո՛չ . եւ սակայն... պատմենք հետեւեալն եւ կը հասկնաք թէ ի՞նչ ըսելէ Փռան-մասուններու մէջ մտնել :

Օր մը , Պապ մը կ'որոշէ անպատճառ իմանալ Փռան-մասուններու գաղտնիքներն . Ի՞նչ ընել : Կը կանչէ Կարդինալ մը եւ կը յանձնարարէ նմա երթալ Փռան-մասուն լինել : — Կարդինալը կ'ազաբեկի այս ամբարիշտ անաշարիքն , բայց Պապը կը հանդարտեցնէ նորա խղճահարութիւնը : Սիրելիս , կ'ըսէ , կ'երթաս Փռան-մասուն կ'ըլլաս , անկեղծ կը ձեւանաս . կը թափանցես նոցա ամէն գաղտնեաց եւ օր մը կուգաս ինձ կը հաղորդես : Այս ընթացքը գուցէ քեզ չատուիր չերեւայ , բայց վասն ամենամեծ փառանքն եկեղեցւոյ է : Ես ներողութիւնը քեզ կ'ուտամ :

Կարդինալը կ'երթայ . ամիսներ , տարիներ կ'անցնին եւ նա չերեւիր : Պապին սիրտն անհանգիստ է , բայց կը մխիթարուի

մտածելով թէ Կարդինալն ամէն ինչ լաւ իմացած պիտի գայ , այն պատճառաւ . կ'ուշառայ : Օր մը երբ Պապն այս մտածութիւններուն մէջ ընկղմած պատուհանը նստած է , կը տեսնէ որ իւր Կարդինալը փողոցէն կ'անցնի անմիջապէս պատուհանը կը բանայ եւ կ'սկսի կանչել :

— Է՛յ , սիրելի որդեակ , սիրելի որդեակ , ո՞ր մնացիր :

— Մառայ եմ Սուրբ Հայր , ծառայ եմ , կը պատասխանէ , ի՞նչ հրաման ունիք :

— Ո՞ր է ինձի լուր պիտի բերէիր :

— Ի՞նչ լուր :

— Փռան-մասուններու գաղտնիքները :

— Ազգի ըսիք : Եթէ այդչափ հետաքրքիր էր եւ կ'ուզէք իմանալ , հրամայեցէք զուր ալ Փռան-մասուն եղիք , կ'իմանաք գաղտնիքներն : — Մառայ եմ Սուրբ Հայր :

Խեղճ Պապն ապշած կը մնայ . Բայց ի՞նչ ըսել : Այս է Փռան-մասուններու զօրութիւնն : Մեր խորէն Սրբազանն ալ քիչ մը այդ Կարդինալին կը նմանի այժմ :

Գաղտնապահութիւնն այնքան սուալ տարած են որ եւ ոչ իսկ իրենց ժողովատեղին ուր լինելը կրնայինք իմանալ , եւ խեղճ Աբե-Եփ կը գրէր Բերա , մինչ նոցա Ղալաթիա էր , Ղալաթիա , մինչ Քուլ-Քարու էին :

Գուժարման կեդրոն խաղի-Բաշա խառն է , Մէրէճ-Գուլի Յարութիւն էֆ. Ի սենեակն , աղբայն օքա . Այդ եւս պաշտօնական եւ անպաշտօն ամէն անոնք զորս նախախնամութիւնն ստեղծած է իբր հայ ազգին պահապան հրեշտակներն : Ի՞նչ հոգեզուարձ տեսարան : Ի՞նչ թշնամիներ իրարու ձեռք կապուած են եւ կ'երգեն :

Եղբայր զեղբայր զգուէ սիրով : Եւ իրենց մեծ քահանայապետն է Պարտիզակցի Վահան վարդապետ : Նա է որ հրուիրակ կ'առարուի առ եկեղեցականս Հայաստանեայց , թողով մի ի ձեռին ստորագրութիւններ կորզելու :

Այս առթիւ սրտաշարժ տեսարան մը կը պատմեն :

Վահան վարդապետ նախ քան ճամբայ ելնելն ծնրադիր չորած է այդ խառնի միահեծան լուսաճաճանչ պետի առաջ եւ խնդրած է նորա օրհնութիւնն . — Մենք եկեղեցականքս պիտի խորհարինք այսուհետեւ ձեր առաջ : Գուր Քարաւաններ պիտի ուսուցանէք մեզ կրօնըն ու հաւատքն . ուրեմն օրհնեցէք զիս որ Աստուծով գործեմ :

Եւ պետն , Մեծ-վարդապետ , ձեռքը դրած է վարդապետի գլխուն եւ օրհնած է զնա ըսելով .

— Ե՛րթ , Աստուած եւ Բազոս ընդ քեզ :

Փետրուար 28

Գուժարեցան երէկ , Ներկայ ինն եօթն անգամ Կրօն. ժողովէն . հինգ անգամ Քաղ. ժողովէն եւ — ահա՛ դժբաղդութիւնը — Ատենապետաց Իւլաւի կողմանէ : Մերէճ-Գուլի էֆէնտին , որով ժողովականաց թիւը կը լինի քառեւեթ : Աւելորդ է աւելցնել թէ 15 ներկայներով ժողով մը չկրնար լաւ արդիւնք արտադրել :

Հաշտարար դատաւոր Մերէճ-Գուլի էֆէնտին կը ներկայացնէ առաջարկ մը Ատենապետաց կողմանէ . այդ է զիմուսն ընել ձեռամբ խառն պատգամաւորութեան մը , բողոքայեալ երկու եկեղեցականէ եւ երկու աշխարհականէ , եւ փոխանակ գրաւոր դիմումի բերանադրի դիմում ընել :

Կրօն. ժողովը չը համակերպիր այս առաջարկին , բերանադրի դիմում մի հետք չի տար պատմութեան մէջ . Կրօնական խնդրոյ մի համար միայն եկեղեցականք պէտք է երթան պատասխանատուութիւնը միայն իրենց վրայ պէտք է մնայ :

Քաղ. ժողովը համաձայնութիւն գոյացնելու արամադիր էր բայց մեծամասնութիւն չունենալով նոյն օրն որոշեց երկուշաբթի ժողովիլ եւ գրադիլ այս հարցով :

Նոյն օրը Կրօն. ժողովոյ եւ օրդարական նստի օրն է :

Հ .

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԻՐԱԳՐՈՒ